ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 1. ՆՊԱՏԱԿ

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) պահանջում է իր տնօրեններից, պաշտոնատար անձանցից, աշխատողներից, հանձաժողովի անդամներից և կամավորներից, ինչպես նաև ՀԲԸՄ-ին պայմանագրային ծառայություններ մատուցող անձանցից (այսուհետ՝ Պաշտպանված անձ) ՀԲԸՄ-ի հետ կապված պարտականությունները և այլ գործողություններ կատարելիս պահպանել գործարար և անձնական էթիկայի բարձր չափանիշները: Որպես ՀԲԸՄ աշխատողներ և ներկայացուցիչներ, Պաշտպանված անձանցից ակնկալվում է կատարել իրենց պարտականությունները ազնվորեն և պահանջվում է պահպանել բոլոր կիրառելի օրենքները և կարգավորումները:
Ազդարարման քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակը հնարավորություն տալն ու խրախուսելն է Պաշտպանված անձանց, առանց վրեժխնդրության վախի, գաղտնի կամ ցանկության դեպքում անանուն կերպով բարձրաձայնել մտահոգությունները և կասկածները՝ կապված ոչ էթիկական և/կամ անօրինական վարքագծի կամ գործողությունների մասին, որպեսզի ՀԲԸՄ-ն կարողանա անդրադառնալ այդ մտահոգություններին և շտկել ոչ պատշաճ վարքագիծն ու գործողությունները:

Սույն քաղաքականությունը կարգավորում է այն գործընթացը, որի միջոցով աշխատողները կամ այլք, որոնք, գործում են ՀԲԸՄ անունից, կարող են ուղղակիորեն կամ անանուն կերպով տեղեկացնել ՀԲԸՄ համապատասխան ներկայացուցիչներին հնարավոր խախտումների կամ մտահոգությունների մասին: Բացի այդ, սույն Քաղաքականությունը սահմանում է մեխանիզմներ աշխատողների բողոքին և նմանատիպ հնարավոր խախտումներին ու մտահոգություններին պատասխանելու և արձանագրությունները պահպանելու համար:

ՀՈԴՎԱԾ 2. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանված անձի պարտավորությունն է բարեխղճորեն տեղեկացնել իր ցանկացած մտահոգության մասին, որը կարող է նա ունենալ փաստացի կամ կասկածելի գործունեությունների վերաբերյալ, որոնք կարող են լինել անօրինական կամ խախտել ՀԲԸՄ Շահերի բախման քաղաքականությունը, կամ կապ ունենալ խարդախության, գողության, յուրացման, հաշվապահական հաշվառման կամ աուդիտի խախտումների

կամ թերությունների, ոչ պատշաճ ֆինանսական հաշվետվողականության կամ ներքին վերահսկողության, կաշառակերության, կաշառաբաժինների և ՀԲԸՄ ակտիվների չարաշահման, ինչպես նաև գործարար և անձնական էթիկայի կանոնների իրական կամ ենթադրյալ խախտումների բոլոր դեպքերի հետ, երբ դրանք կապված են ՀԲԸՄ-ի հետ (այսուհետ՝ Մտահոգություն)՝ սույն Քաղաքականությանը համապատասխան։

ՀՈԴՎԱԾ 3. ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

Ոչ մի Պաշտպանված անձ, ով բարեխղճորեն տեղեկացնում է Մտահուգության մասին, չպետք է վերջինիս պատճառով ենթարկվի ահաբեկման, ոտնձգության, վրեժխնդրության, խտրականության կամ աշխատանքային անբարենպաստ հետևանքների։ ՀԲԸՄ ցանկացած աշխատող կամ այլ ներկայացուցիչ, ով վրեժխնդիր է լինում Մտահոգության մասին բարեխիղճորեն հայտնած անձի նկատմամբ, ենթակա է կարգապահական տույժի՝ ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի կամ ՀԲԸՄ-ի հետ այլ հարաբերությունների դադարեցման։ Չնայած սույն փաստաթղթում սահմանված հակառակ դեպքերի, այս Քաղաքականությունն աշխատանքային պայմանագիր չէ և չի փոփոխում ՀԲԸՄ-ի և իր աշխատողների միջև աշխատանքային հարաբերությունները, ոչ էլ փոփոխում է այն փաստը, որ աշխատողները ՀԲԸՄ-ում աշխատում են իրենց կամքով։ Սույնում ներառված ոչինչ նպատակ չունի տրամադրել որևէ Պաշտպանված անձի այլ հավելյալ իրավունքներ կամ հայցի հիմքեր, բացի նրանցից որոնք սահմանված են գործող օրենսդրությամբ։

ՀՈԴՎԱԾ 4. ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ցանկացած մտահուգության մասին պետք է հաղորդվի ՀԲԸՄ քարտուղարին (այսուհետ՝ Լիազորված պաշտոնյա) որքան հնարավոր է շուտ 9-րդ Հոդվածում նշված հասցեին կամ էլեկտրոնային փոստին։ Լիազորված պաշտոնյան պետք է տեղեկացնի ՀԲԸՄ Կենտրոնական վարչությանը բոլոր հաղորդումների մասին։ Ցանկացած հարց, որը վերաբերում է սույն Քաղաքականության շրջանակին, մեկնաբանությանը կամ գործողությանը, պետք է ուղղվի Լիազորված պաշտոնյային։

ՀՈԴՎԱԾ 5. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական վարչությունը անդրադառնում է բոլոր հաղորդված Մտահոգություններին և որոշում է հետաքննության կամ այլ քննության շրջանակները, որը կարող է երաշխավորված լինել։ Կենտրոնական վարչությունը կարող է փոխանցել հաղորդված

Մտահոգության հետաքննելու պարտավորությունը Կենտրոնական վարչության հանձնաժողովներից մեկին, Կենտրոնական վարչության մեկ կամ մի քանի անդամի, ՀԲԸՄ աշխատողի, կամ մեկ այլ անհատի՝ ներառյալ Կենտրոնական վարչության կողմից ընտրված և ՀԲԸՄ աշխատող չհանդիսացող անձանց, պայմանով, որ Կենտրոնական վարչությունը չի կարող նման պարտավորություն պատվիրակել որևէ աշխատողի կամ այլ անձի, որը հաղորդված մտահոգության սուբյեկտ է կամ այնպիսի ձևով, որը կբացահայտի անանուն հաղորդում ներկայացրած աշխատողի ինքնությունը կամ բողոքի կամ հետաքննության գաղտնիությունը:
Չնայած սույնով սահմանվածի հակառակ դեպքերի, հաղորդված Մտահոգության վերաբերյալ ցանկացած հետաքննության կամ քննության շրջանակը, ձևը և պարամետրերը պետք է որոշվեն Կենտրոնական վարչության (կամ համապատասխան հանձնաժողովի) կողմից՝ իր սեփական հայեցողությամբ, և ՀԲԸՄ-ն և իր աշխատողները և այլ ներկայացուցիչները պետք է անհրաժեշտության դեպքում համագործակցեն նման հետաքննության ընթացքում: Կենտրոնական վարչությունը (կամ համապատասխան հանձնաժողովը) ազատ է իր հայեցողությամբ ընգրկել այլ իրավաբանների, աուդիտորների կամ այլ փորձագետների ու խորհրդատուների՝ օգնելու հետաքննության կամ արդյունքերի վերլուծության գործում:

ՀՈԴՎԱԾ 6. ԲԱՐԵԽԻՂՃՈՐԵՆ ԳՈՐԾԵԼԸ

Մտահոգության վերաբերյալ հաղորդում ներկայացրած ցանկացած անձ պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ հիմքեր ունենա ենթադրելու, որ բացահայտված տեղեկատվությունը կարող է վկայել օրենքի և/կամ էթիկական ստանդարտների խախտումներ: Ցանկացած մեղադրանք, որը ապացուցվում է, որ չարամտորեն կամ գիտակցաբար կեղծված է եղել, դիտարկվում է որպես կարգապահական լուրջ խախտում:

ՀՈԴՎԱԾ 7. ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

ՀԲԸՄ-ն պահպանում է սույն Քաղաքականության շրջանակներում Մտահոգության մասին ազդարարած անձի գաղտնիությունը մինչև հետաքննության մեկնարկը: Այնուհետև, Մտահոգություն հայտնած Պաշտպանված անձի ինքնությունը, եթե պահանջվի, կարող է գաղտնի պահվել, բացառությամբ այն դեպքերի, երբ գաղտնիությունն անհամատեղելի չէ արդար հետաքննության անցկացման հետ, կամ եթե առկա չէ հիմնական պատճառ Մտահոգություն հաղորդող Պաշտպանված անձին նույնականացնելու կամ այլ կերպ ինքությունը բացահայտելու, կամ այն դեպքում, երբ Պաշտպանված անձի ինքության բացահայտումը չի պահանջվում օրենքով: Այն դեպքում, երբ կարգապահական վարույթ է հարուցվում որևէ անձի նկատմամբ սույն

Քաղաքականության շրջանակներում Մտահոգության մասին հաղորդման արդյունքում, ՀԲԸՄ-ն սովորաբար պահանջում է, որ հաղորդում ներկայացրած անձի անունը ներկայացվի նրան, ում դեմ ուղղված է այդ հաղորդումը։ ՀԲԸՄ-ն իր աշխատողներին խրախուսում է ցանկացած Մտահոգության վերաբերյալ հաղորդման դեպքում գրել անունը, սակայն, միևնույն ժամանակ, ցանկացած աշխատող իրավունք ունի Մտահոգության վերաբերյալ հաղորդումը ներկայացնել անանուն՝ ստորև ներկայացված ընթացակարգերի համաձայն։ Անանուն Մտահոգությանը պատասխանելիս՝ ՀԲԸՄ-ն պատշաճ ուշադրություն է դարձնում Մտահուգության մեջ նշված ցանկացած անձի նկատմամբ արդարացի մոտեցման ապահովմանը, լրջորեն կմոտենա բարձրացված խնդրին, առկա տեղեկատվության կամ մեղադրանքների հավաստիությանը և արդյոնավետ հետաքննության անցկանցմանը։ Հետաքննությունները պետք է անցկացվեն որքան հնարավոր է արագ՝ հաշվի առնելով Մտահոգության և բարձրաձայնված խնդրի բնույթը ու բարդությունը։

ՀՈԴՎԱԾ 8. ՀԱՂՈՐԴՎԱԾ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Լիազորված պաշտոնյան հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է Մտահոգության վերաբերյալ հաղորդման ստացումը, բայց միայն այն դեպքում, երբ հաղորդում տվող անձի ինքնությունը հայտնի է, կամ ներկայացված է հետադարձ հասցե։ Բոլոր հաղորդումներն արագորեն պետք է հետաքննվեն։ Նմանատիպ ցանկացած հետաքննություն ամբողջովին գտնվում է Կենտրոնական վարչության (կամ համապատասխան հանձնաժողովի) հայեցողության ներքո, և կձեռնարկվեն համապատսխան ուղղիչ գործողություններ, եթե դա երաշխավորվում է հետաքննությամբ։։

ՀՈԴՎԱԾ 9. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Կորպորատիվ քարտուղար
Գլխավոր գործառնական տնօրեն
Հայկական բարեգործական ընդհանուր միություն

55 Իսթ 59-րդ փողոց
Նյու Յորք, Ն310022-1112
ԱՄՆ
ԿԱՄ
Էլ. հասցե՝ corporatesecretary@agbu.org

Ընդունված է օգոստոսի 8-ին, 2016